

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/1

10 հունիսի 2013թ.

Քննարկվեց «Թրանսփարենսի հնթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության 23.04.2013 թ-ի թիվ ԹԻ-13/22 վարչական բողոքը «ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 14.11.2012թ. թիվ 11-1/12154-12 վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

«Թրանսփարենսի հնթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ (այսուհետ նաև Կազմակերպություն) բողոքում մասնավորապես նշված է.

Կազմակերպությունը 19.10.2012 թ. թիվ ԹԻ-12/106 և 05.11.2012 թ. թիվ ԹԻ-12/111 դիմումներ (հետայսու՝ Հարցումներ) է ներկայացրել «ԿԱ պետական եկամուտների կոմիտե (հետայսու՝ Կոմիտե): Փաստը հաստատվում է Հարցումների կրկնօրինակներով:

Կազմակերպությունը Հարցումներով Կոմիտեից խնդրել է տրամադրել տեղեկատվություն թվով տասնմեկ հանքարդյունաբերական ընկերությունների վերաբերյալ, մասնավորապես, թե 2010-2011 թվականների ընթացքում՝ ըստ տարիների.

- որքա՞ն են կազմել արտադրական նպատակներով օգտագործված ջրի բնօգտագործման վճարները.

- որքա՞ն են կազմել պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար վճարված բնօգտագործման վճարները.

- որքա՞ն են կազմել բնապահպանական (արտահոսքերի և արտանետումների համար) վճարները.

- որքա՞ն են կազմել վճարված հարկերը (բոլոր հարկատեսակները ներառյալ).

Ընկերությունների ցանկը կցվել է:

Կազմակերպության 19.10.2012 թ-ի թիվ ԹԻ-12/106 Հարցումը փոստային առաքմամբ Կոմիտե է ուղարկվել 22.10.2012 թ-ին՝ պատվիրված նամակով, իսկ 05.11.2012 թ-ի թիվ ԹԻ-12/111 Հարցումը՝ 05.11.2012 թ-ին՝ պատվիրված նամակով:

Կոմիտեն 14.11.2012 թ-ի թիվ 11-1/12154-12 գրությամբ պատասխանել է Հարցումներին:

Սույն բողոքով Կազմակերպությունը պնդում է, որ պետական մարմնի՝ տվյալ դեպքում՝ Կոմիտեի կողմից, տեղի է ունեցել միջամտություն «Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով (հետայսու՝ Կոնվենցիա) երաշխավորված տեղեկատվության ազատության իր իրավունքին, որը՝

ա) նախատեսված չի եղել օրենքով,

բ) իսկ եթե նախատեսված է եղել օրենքով, ապա այն անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում:

Օրենսդրորեն երաշխավորված է տեղեկատվության ազատության իրավունքի իրացումը: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, ի թիվս այլոց, սահմանված է տեղեկատվություն եզրույթը, սահմանված են դրա ստացման ընթացակարգերը:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի «տեղեկությունը» դա անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

Սույն գործով վեճի առարկա չէ այն հանգամանքը, որ Կազմակերպության կողմից փնտրվածը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով

<տեղեկատվություն> է, և, որ դրա տնօրինողը Կոմիտեն է, այդ փաստը հաստատվում է Կոմիտեի 14.11.2012 թ-ի թիվ 11-1/12154-12 գրության բովանդակությամբ, որում վերջինս չի վիճարկում դրանք:

Փաստ է, որ Կազմակերպությունը փնտրել է տեղեկատվություն և այն՝ դրա տնօրինողից չի ստացել: <Ետևաբար, տեղի է ունեցել միջամտություն Կազմակերպության՝ ՀՀ Սահմանադրությամբ, Կոնվենցիայով և <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքներին:

Կոմիտեն իր՝ 14.11.2013 թ-ի թիվ 11-1/12154-12 պատասխանում հիմնվել է <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի վրա, ըստ որի հարկային գաղտնիք է <հարկ վճարողի կամ ապահովարդրի (այսուհետ՝ սույն օրենքի իմաստով հարկ վճարող), հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

- հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

- հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

- հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

- հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրության պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

- հարկ վճարողի (հարկ վճարողի գործունեության) վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկությունների>:

Նույն հոդվածի համաձայն. <Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործման, տրամադրման և հրապարակման դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ>:

Կազմակերպության հարցումներով հայցվող տեղեկատվությունը չի հանդիսանում օրենքով նախատեսված հրապարակման ոչ ենթակա հարկային գաղտնիք: <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն հարկային մարմինները ՀՀ կառավարության սահմանած ձևով և կարգով հրապարակում են տեղեկատվություն, մասնավորապես, առաջին 300 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով, իսկ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով տեղադրվում են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

Եթե հարցումով փնտրվող տեղեկատվությունը հանդիսանար օրենքով նախատեսված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն, ապա դրանց հրապարակումն ընդհանրապես արգելված կլիներ, մինչդեռ <Հարկերի մասին> ՀՀ օրենքը սահմանում է հրապարակման ինստիտուտը: Սակայն, Կազմակերպության կողմից փնտրվող տեղեկատվությունը, օրինակ բնապահպանական վճարները, այդ հրապարակումների մեջ առանձին արտացոլված չեն: Իսկ տասնմեկ ընկերություններից վեցը ընդհանրապես խոշորների ցանկում ընդգրկված չեն, հետևաբար դրանց վերաբերյալ տեղեկատվությունը չի հրապարակվում հարկային մարմնի պաշտոնական կայքում:

Վերը նշվածից հետևում է, որ Կոմիտեի 14.11.2012 թ-ի թիվ 11-1/12154-12 վարչական ակտը <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի սխալ մեկնաբանման արդյունք է: Ավելին՝ ակտն ընդունելիս չեն պահպանվել և չեն կիրառվել <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 8-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որպիսի պարագայում Կոմիտեի 14.11.2012 թ-ի թիվ 11-1/12154-12 վարչական ակտի վավերականությունը դառնում է վիճարկելի:

Խախտվել են նաև <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույթները, այն է՝ Կազմակերպության 19.10.2012թ-ի թիվ ԹԻ-12/106 հարցմանը պատասխանվել է 5 օրյա ժամկետի խախտմամբ:

Հիմք ընդունելով սույն գործով ներկայացված փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումները, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 70-72-րդ հոդվածներով կազմակերպությունը խնդրում է.

1. Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ 14.11.2012 թ-ի թիվ 11-1/12154-12 որոշումը:

2. <Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն> հասարակական կազմակերպությանը տրամադրել հարցումներով փնտրվող տեղեկատվությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Կազմակերպության ներկայացուցիչների ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ վարչական բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

<Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները: Նշված օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. <Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ծայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).

տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք.

հարցում՝ տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.

իրապարակում՝ տեղեկությունը մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը և մատչելի դարձնելը>:

<Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման ընթացակարգը: Նշված օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն. <1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: 3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում>:

<Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերը և կարգը: Նշված օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <1. Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում>:

<Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված են տեղեկատվության ազատության սահմանափակումները: Նշված հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն. <1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ

մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ֆիզիկական անձանց անձնական և ընտանեկան, ինչպես նաև իրավաբանական անձանց՝ առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 5-րդ կետի իրավանորմի մեկնաբանմամբ Հանձնաժողովը եզրակացնում է, որ իրավաբանական անձանց՝ առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը բացառապես սահմանվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենքներով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված են նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները: Նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները... **հարկային գաղտնիք**՝ հարկ վճարողի կամ ապահովարի (այսուհետ՝ սույն օրենքի իմաստով հարկ վճարող), հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

- հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

- հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

- հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

- հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրության պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

- հարկ վճարողի (հարկ վճարողի գործունեության) վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկությունների:

Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործման, տրամադրման և հրապարակման դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ»:

Տվյալ դեպքում Կազմակերպությունը հարցումներով Կոմիտեից խնդրել է տրամադրել տեղեկատվություն հարցմանը կից ցանկով փաստացի ներկայացված թվով 11 հանքարյունաբերական ընկերությունների վերաբերյալ: Մասնավորապես, պահանջվել է հայտնել, թե՞ որքան են կազմել հարցումում նշված հանքարյունաբերական ընկերություններից յուրաքանչյուրի կողմից արտադրական նպատակներով օգտագործված ջրի բնօգտագործման վճարները, որքան են կազմել այդ հանքարյունաբերական ընկերություններից յուրաքանչյուրի կողմից պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար վճարված բնօգտագործման վճարները, որքան են կազմել այդ հանքարյունաբերական ընկերություններից յուրաքանչյուրի կողմից վճարված բնապահպանական (արտահոսքերի և արտանետումների համար) վճարները, որքան են կազմել հանքարյունաբերական ընկերություններից յուրաքանչյուրի կողմից վճարված հարկերը (բոլոր հարկատեսակները ներառյալ), որքան են կազմել հանքարյունաբերական ընկերություններից յուրաքանչյուրի կողմից թափոնների տեղադրման համար վճարները:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի «հարկային գաղտնիք» հասկացության բնորոշմանը վերաբերվող իրավանորմի մեկնաբանմամբ Հանձնաժողովը եզրակացնում է, որ տվյալ դեպքում Կազմակերպության հարցումներով դրանցում նշված հանքարյունաբերական ընկերությունների վերաբերյալ պահանջված տեղեկատվությունը հանդիսանում է հարկային գաղտնիք, քանի որ այդ ընկերությունների վերաբերյալ պահանջված տեղեկություններն ուղղակի չեն հանդիսանում այդ ընկերությունների կողմից

կամ նրանց համաձայնությամբ հրապարակված տեղեկություններ, չեն հանդիսանում այդ ընկերությունների հարկ վճարողի հաշվառման համարների վերաբերյալ տեղեկություն, չեն հանդիսանում այդ ընկերությունների կանոնադրության մեջ ներառվող տեղեկություններ, չեն հանդիսանում հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրության պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկություններ, չեն հանդիսանում այդ ընկերությունների գործունեության վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկություններ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 5-րդ կետն ըստ էության սահմանում է իրավաբանական անձանց առևտրային գաղտնիք համարվող տեղեկությունների շրջանակը:

Վերը նշված իրավանորմի մեկնաբանմամբ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ըստ էության, առևտրային գաղտնիք են համարվում այն տեղեկությունները, որոնք ներառված չեն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված իրավաբանական անձանց՝ առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկում: Կազմակերպության կողմից հարցումներով պահանջված տեղեկությունները որևէ նորմատիվ իրավական ակտով ներառված չեն իրավաբանական անձանց՝ առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկում: Հետևաբար, վերը նշված իրավանորմերի մեկնաբանմամբ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Կազմակերպության կողմից հարցումներով պահանջված ընկերությունների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հանդիսանում է և պարունակում է այդ ընկերությունների վերաբերյալ առևտրային գաղտնիք:

<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. <Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործման, տրամադրման և հրապարակման դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ>: Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակման դեպքերը, կարգը սահմանված են <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն. <Հարկային մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով, ցանկերի տեսքով հրապարակում են տեղեկատվություն՝

1) մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը՝

ա) հաշվետու տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների վերաբերյալ,

բ) օգտակար հանաճոների արդյունահանման լիցենզիա, թույլտվություն կամ արտոնագրեր ունեցող, սակայն գործունեություն չիրականացնելու մասին հայտարարություն կամ գրոյական հաշվարկ-հաշվետվություններ ներկայացրած հարկ վճարողների վերաբերյալ,

գ) հաշվետու տարվան նախորդող և հաշվետու տարում <Շահութահարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածով սահմանված շահութահարկի հիսուն և հարյուր տոկոս նվազեցման արտոնությունից օգտվող օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների վերաբերյալ,

դ) հաշվետու տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 50 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների վերաբերյալ,

ե) հաշվետու տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 1.0 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած բանկերի և նրանց կողմից վճարված շահութահարկի մեծության վերաբերյալ,

զ) հաշվետու տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 3 մլն դրամ և ավելի եկամտահարկ վճարած հարկային գործակալների վերաբերյալ,

է) հաշվետու տարվա արդյունքներով պարզեցված հարկ վճարողներին պատկանող խանութների մասով ցույց տված 50.0 մլն դրամ և ավելի գումարի չափով իրացման շրջանառություն ունեցող և հաշվետու տարվա ընթացքում 15.0 մլն դրամը գերազանցող

ապրանքային մնացորդ ունեցող և հարկման ընդհանուր կարգին անցած պարզեցված հարկ վճարողների վերաբերյալ.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝

առաջին 300 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով, ավելացված արժեքի հարկ վճարող համարվողների հարկ վճարողի հաշվառման համարները և անվանումները, իսկ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով, ավելացված արժեքի հարկ վճարող համարվողների հարկ վճարողի հաշվառման համարները և անվանումները տեղադրվում են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում»:

Տվյալ դեպքում հարկ է նշել նաև «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված հարկային մարմնի պարտականությունների վերաբերյալ: Մասնավորապես, նշված օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերի համաձայն, հարկային մարմինը պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, հարկ վճարողների իրավունքները և օրինական շահերը, պահպանել հարկային գաղտնիքը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի վերը նշված իրավանորմի մեկնաբանմամբ Հանձնաժողովը եզրակացնում է, որ հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործման, տրամադրման և հրապարակման դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ: Իսկ այդ հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակման դեպքերը, ծավալը ստույգ սահմանվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով: Իսկ մնացած դեպքերում, բացառությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված հրապարակման ենթակա տեղեկությունների, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, հարկային մարմինն ուղղակիորեն պարտավոր է պահպանել հարկային գաղտնիքը և դրանք, բացառությամբ սահմանված դեպքերի, տրամադրման կամ հրապարակման ենթակա չեն:

Նման պայմաններում, վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածների մեկնաբանմամբ եզրակացնում է, որ կազմակերպության հարցումների հիման վրա տրամադրման ենթակա է միայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված հրապարակված տեղեկատվությունը՝ միայն այդ հրապարակված ծավալով: Իսկ մնացած մասով հարցումով պահանջված տեղեկատվությունը ենթակա չէ տրամադրման, քանի որ այն հանդիսանում է հարկային գաղտնիք, որն իր մեջ պարունակում է տվյալ ընկերությունների վերաբերյալ առևտրային գաղտնիք:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված այն պնդմանը, որ Կազմակերպության 19.10.2012թ-ի թիվ ԹԻ-12/106 հարցմանը պատասխանվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է 5 օրյա ժամկետի խախտմամբ, ապա Հանձնաժողովն արձանագրեց, որ խախտման փաստն իրոք առկա է, սակայն վերջինիս և հարցումը մերժելու հիմք հանդիսացող փաստական հանգամանքների միջև բացակայում է անմիջական կապը, ուստի և պահանջներից մեկի լուծումն ինքնաբերաբար չի կարող հանգեցնել մյուսի լուծմանը՝ որպես առաջինի հետևանք: Միաժամանակ Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ վերոգրյալ դիրքորոշումն է արտահայտվել նաև «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի «տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, վարչական ակտն անվավեր ճանաչելու, հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն

պարտավորեցնելու> պահանջների մասին ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած 04.11.2011 թ-ի թիվ ՎԴ 3883/05/11 վճռով և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.03.2012 թ-ի թիվ ՎԴ 3883/05/11 որոշմամբ:

Հանձնաժողովի 21.05.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն կազմակերպության 23.04.2013 թ-ի թիվ ԹԻ-13/22 վարչական բողոքը մերժվել է:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ղ ո շ ու մ է՝

<Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն> հասարակական կազմակերպության 23.04.2013 թ-ի թիվ ԹԻ-13/22 վարչական բողոքը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ